Հաստատված է
Հայաստանի եվրոպական համալսարանի
գիտական խորհրդի
2021թ. դեկտեմբերի 14-ի թիվ 31 նիստում
Ռեկտոր՝ Հ. Բիշարյան

Approved by
the Scientific Council of
European University of Armenia
Meeting N 31 of 14.12.2021
Rector: H. Bisharyan

_____

(ստորագրություն, Կ.Տ./ signature)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ACCOUNTABILITY ASSURANCE POLICY OF THE EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Եվրոպական համալսարանի (այսուհետ՝ ՀԵՀ) հաշվետվողականության ապահովման քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանում է ՀԵՀ ներքին և արտաքին շահառուներին հաշվետվողականության քաղաքականության նպատակը և խնդիրները, սկզբունքներն ու կառուցակարգերը:

1.2 Սույն Քաղաքականությունը բխում է ՀԵՀ ռազմավարությունից, որակի ապահովման քաղաքականությունից և համարվում է որակի ապահովման ներքուհական համակարգի բաղկացուցիչ մասը:

1.3 Սույն Քաղաքականությունը հաստատում ու դրանցում փոփոխություններ է կատարում ՀԵՀ գիտական խորհուրդը (այսուհետ՝ Գիտխորհուրդ):

1.4 Սույն Քաղաքականությամբ սահմանված դրույթները ենթակա են պարտադիր կատարման ՀԵՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների համար և նպատակ

1. GENERAL PROVISIONS

1.2 The Accountability Assurance Policy (hereinafter referred to as the Policy) of the European University of Armenia (hereinafter referred to as EUA) defines the purpose and objectives, principles and mechanisms of accountability towards EUA internal and external stakeholders.

1.2 This Policy is based on the EUA strategy, quality assurance policy, and is considered an integral part of the internal quality assurance system.

1.3 This Policy is approved and amended by the EUA Scientific Council (hereinafter referred to as the Scientific Council).

1.4 The provisions set in this Policy are mandatory for all EUA structural units and aim to increase the accountability and transparency of the EUA at the national and international

ունեն բարձրացնելու ՀԵՀ-ի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը ազգային և միջազգային մակարդակներում:

1.5 Հաշվետվողականությունը համակարգային գործընթաց է, որը միտված է բուհի շահագրգիռ կողմերին ներկայացնելու համապարփակ տեղեկատվություն բուհի գործունեության և իրականացված ու իրականացվող գործընթացների վերաբերյալ:

1.6 Հաշվետվողականությունը նպաստում է.

1) ազգային և միջազգային մակարդակներում բուհի վարկանիշի բարձրացմանը,
2) ՀԵՀ-ի ենթակառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը,
3) ՀԵՀ-ի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավմանը,
4) ՀԵՀ-ում իրականացվող գործընթացներում ներքին և արտաքին շահառուների ներգրավվածության ու իրազեկվածության մակարդակների բարձրացմանը,
5) ՀԵՀ-ի գործունեության վերաբերյալ շահառուների փոխվստահության ձևավորմանն ու ամրապնդմանը,
6) ՀԵՀ-ում որակական և քանակական վերլուծությունների բարելավմանը,
7) ՀԵՀ-ում որակի մշակույթի տարածմանը, գործունեության թափանցիկության ապահովմանը:

levels.

1.5 Accountability is a systemic process which aims to provide comprehensive information to the stakeholders of the HEI on its implemented and ongoing activities.

1.6 Accountability contributes to:

1) increasing the rate of the university at national and international levels;
2) increasing the efficiency of the EUA infrastructural units;
3) improving the quality of educational services provided by the EUA;
4) increasing the levels of involvement and awareness of internal and external stakeholders in the processes implemented at the EUA;
5) building and strengthening stakeholders' mutual trust towards EUA activities;
6) improving qualitative and quantitative analyses at the EUA;
7) spreading quality culture at the EUA, providing activity transparency.

2. ՀԵՀ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

2.1 ՀԵՀ արտաքին շահառուներն են.

1) դիմորդները և նրանց ծնողները,
2) շրջանավարտները,
3) գործատուները,
4) ազգային և միջազգային գործընկեր համալսարանները, կազմակերպությունները,

2. EUA EXTERNAL AND INTERNAL STAKEHOLDERS

2.1 EUA external stakeholders are:

1) applicants and their parents;
2) alumni;
3) employers;
4) national and international partner universities, organizations, associations and unions;

ընկերակցությունները, միությունները,
5) բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող պետական կառույցները,
6) հանրությունը:

2.2 ՀԵՀ ներքին շահառուներն են.
1) ռեկտորը, ֆինանսավարչության տնօրենը, պրոռեկտորները,
2) ուսումնառողները,
3) պրոֆեսորադասախոսական կազմը,
4) ուսումնաօժանդակ և վարչական աշխատակիցները, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցները:

5) state structures regulating the sphere of higher education;
6) public.

2.2 EUA internal stakeholders are:
1) rector, director of financial-admininistrative division, vice-rectors;
2) students;
3) academic staff;
4) support and administrative staffs,
5) employees of structural and separate subdivisions.

3. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1 Սույն Քաղաքականության նպատակն է ՀԵՀ-ի գործունեության և ՀԵՀ-ում իրականացված ու իրականացվող փոխկապակցված գործընթացների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը բոլոր շահառուներին:

3.2 Սույն Քաղաքականությունը միտված է ՀԵՀ-ի թափանցիկության, հաշվետվողականության ապահովմանը, կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը և, ընդհանուր առմամբ, բուհի վարկանիշի բարձրացմանը:

3.3 ՀԵՀ հաշվետվողականության քաղաքականության խնդիրներն են.
1) հաշվետվողականության և թափանցիկության ապահովման համապատասխան փաստաթղթային հենքի ստեղծումը,
2) հաշվետվողականության քաղաքականության իրականացման ընթացակարգի ձևավորումը,
3) հաշվետվողականության և թափանցիկության ապահովման գործիքա-

3. THE GOAL AND OBJECTIVES OF THEACCOUNTABILITY POLICY

3.1 The purpose of this Policy is to provide information to all stakeholders on the EUA activities and implemented as well as ongoing interrelated processes at the EUA.

3.2 This Policy is aimed at ensuring the transparency and accountability of the EUA, increasing the efficiency of the activities of its structural subdivisions and, in general, raising the rate of the HEI.

3.3 The objectives of the EUA accountability are:
1) creation of an appropriate document base for ensuring accountability and transparency;
2) development of an accountability policy implementation procedure;
3) development of tools for ensuring accountability and transparency;
4) informing the stakeholders about the EUA activities and its performance;

կազմի մշակումը,

4) շահառուներին ՀԵՀ գործունեության և դրա կատարողականի մասին իրազեկումը,
5) հետադարձ կապի մեխանիզմների միջոցով շահառուներից ստացած արձագանքների վերլուծությունը,
6) ՀԵՀ գործունեության արդյունավետության գնահատումը, հաշվետվողականության մշակույթի ձևավորումը, տարածումն ու ամրապնդումը:

5) analysis of feedback received from the stakeholders through feedback mechanisms;
6) assessing the effectiveness of the EUA activities, creating, spreading and strengthening the culture of accountability.

4. ՀԵՀ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.1 ՀԵՀ-ի հաշվետվողականության քաղաքականության սկզբունքներ են.

1) **համահունչություն**. ՀԵՀ-ում իրականացվող գործընթացները և շահառուներին ներկայացվող տեղեկությունները պետք է համահունչ լինեն ՀԵՀ ռազմավարական գերակայություններին, նպատակներին ու կառուցվածքային ստորաբաժանումների հետագա զարգացման ուղղություններին,

2) **անաչառություն.** ՀԵՀ-ի գործունեության, իրականացված և/կամ ընթացիկ գործընթացներում պետք է դրսևորել անաչառության բարձր մակարդակ,

3) **հավաստիություն.** ՀԵՀ-ի գործունեության և իրականացված և/կամ ընթացիկ գործընթացների մասին տեղեկությունները պետք է լինի փաստահեն և արժանահավատ,

4) **թափանցիկություն.** ՀԵՀ-ի գործունեության և գործընթացների մասին տեղեկատվության հավաքագրման և վերլուծության արդյունքները պետք է լինեն հասանելի ՀԵՀ-ի շահառուներին:

4. THE PRINICPLES OF THE EUA ACCOUTABILITY POLICY

4.1 The principles of the EUA accountability policy are:

1) **consistency:** processes implemented at the EUA and the information provided to the stakeholders should be in line with the EUA strategic priorities, goals and directions for the further development of the structural units;

2) **impartiality:** a high level of impartiality should be demonstrated in the activities and ongoing processes of the EUA;

3) **reliability**: the information on the EUA activities and implemented and/or ongoing processes must be factual and reliable;

4) **transparency:** the results of analysis of the EUA activities and processes should be available to the EUA stakeholders.

5. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

5.1 ՀԵՀ շահառուներին հաշվետվողականության ապահովման կառուցակարգերն են.

1) բուհի տարեկան, ընթացիկ, ֆինանսական և այլ տիպի հաշվետվությունները,
2) ՀԵՀ-ի պաշտոնական կայքէջը՝ www.eua.am,
3) Հոգաբարձուների խորհրդի որոշումները, նիստերի արձանագրությունները,
4) Գիտխորհրդի որոշումները, նիստերի արձանագրությունները,
5) Ռեկտորատի որոշումները, նիստերի արձանագրությունները,
6) կառուցվածքային ստորաբաժանումների որոշումները, նիստերի արձանագրությունները,
7) համացանցում ՀԵՀ-ի սոցիալական հաշիվները,
8) տեղեկագրերը, դեղին էջերը,
9) դիմորդի և ուսանողի ուղեցույցները,
10) ՀԵՀ-ի օտարերկրացի ուսանողների համար գործող www.eriicta.com կայքը,
11) զանգվածային լրատվամիջոցները,
12) բուկլետները, բրոշյուրները, թռուցիկները և այլն:

5. MECHANISMS FOR ENSURING ACCOUNTABILITY

5.1 The mechanisms for ensuring accountability to the EUA stakeholders are:

1) annual, current, financial and other types of reports of the EUA;
2) EUA official website: www.eua.am;
3) decisions of the Board of Trustees, minutes of the meetings;
4) decisions of the Scientific Council, minutes of the meetings;
5) decisions of the Rectorate, minutes of the meetings;
6) decisions of structural subdivisions, minutes of the meetings;
7) the EUA social accounts on the Internet;
8) bulletins, yellow pages;
9) applicant and student guidelines;
10) website for foreign students www.eriicta.com;
11) the mass media;
12) booklets, brochures, leaflets, etc.

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն Քաղաքականությունն ուժի մեջ է մտնում ՀԵՀ Գիտխորհրդի հաստատման և հրապարակման պահից:

6.2 Տեքստերի միջև հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է հայերեն տարբերակին:

6. FINAL PROVISIONS

6.1 This Policy will enter into force upon the approval and publication by the EUA Scientific Council.

6.2 In case of any contradictions between the texts, the Armenian version shall prevail.